

## Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Ռումինիան, այսուհետև անվանվելով «Պայմանավորվող Կողմեր»,  
ցանկանալով միմյանց միջև զարգացնել իրավական համագործակցությունը, նպատակ ունենալով կատարելագործել և խորացնել քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության ձևերը,  
որոշեցին կնքել սույն Պայմանագիրը և այդ նպատակով պայմանավորվեցին հետևյալի մասին:

## Մ Ա Ս Ա Ռ Ա Ջ Ի Ն

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Որոշ տերմինների բացատրությունը

1. Սույն Պայմանագրի նպատակների համար.

ա) «քաղաքացիական գործեր» տերմինի տակ հասկացվում են քաղաքացիական և քաղաքացիական դատավարության, ընտանեկան, տնտեսական, աշխատանքային, վարչական, ինչպես նաև միջազգային մասնավոր իրավունքին առնչվող գործերը.

բ) «արդարադատության հիմնարկներ» տերմինի տակ հասկացվում են Պայմանավորվող Կողմերի դատարանները, դատախազության մարմինները, նոտարական գրասենյակները, ինչպես նաև Պայմանավորվող Կողմերի՝ քաղաքացիական և քրեական գործերով իրավասու մյուս մարմինները.

գ) «Պայմանավորվող Կողմի քաղաքացիներ» տերմինի տակ հասկացվում են այն անձինք, որոնք ունեն տվյալ Պայմանավորվող Կողմի քաղաքացիությունը՝ նրա օրենսդրությանը համապատասխան:

2. Պայմանավորվող Կողմերի քաղաքացիներին վերաբերվող դրույթները սույն Պայմանագրի շրջանակներում կիրառվում են նաև Պայմանավորվող Կողմերի իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք հիմնադրվել են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում նրանք ունեն իրենց գտնվելու վայրը:

Հոդված 2. Իրավական պաշտպանությունը

1. Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացիները մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում օգտվում են իրենց անձնական և գույքային իրավունքների նույն իրավական պաշտպանությունից, ինչ այդ Պայմանավորվող Կողմի քաղաքացիները:

2. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները իրավունք ունեն անարգել դիմելու մյուս Պայմանավորվող Կողմի՝ քաղաքացիական և քրեական

գործերով իրավասու արդարադատության հիմնարկներին, պաշտպանելու իրենց շահերը այդ հիմնարկներում, ներկայացնելու դիմումներ և հայցեր՝ նույն պայմաններով, ինչ այդ Պայմանավորվող Կողմի քաղաքացիները:

3. Մի Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկները՝ ըստ խնդրանքի, մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացիներին խորհրդատվություն են ցույց տալիս նրանց օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ օգնություն կամ ներկայացուցչություն ապահովելու նպատակով:

Հոդված 3. Իրավական օգնություն ցույց տալը

Պայմանավորվող Կողմերը՝ ըստ խնդրանքի, քաղաքացիական և քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն են ցույց տալիս սույն Պայմանագրով նախատեսված պայմաններով:

Հոդված 4. Գրավից ազատումը

Մի Պայմանավորվող Կողմի քաղաքացիները, որոնք բնակվում են այդ Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկներ որպես դիմորդ կամ միջնորդ կողմ դիմելիս չեն կարող պարտադրվել վճարելու գրավ կամ կանխավճար՝ անկախ դրանց անվանումից, միայն այն պատճառով, որ նրանք օտարերկրացի են կամ չեն բնակվում այն Պայմանավորվող Կողմի տարածքում, որի արդարադատության հիմնարկին դիմում են ներկայացնում:

Հոդված 5. Դատական ծախսերի վճարումը

Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացիները Մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում դատական ծախսերը վճարում են նույն պայմաններով, ինչ այդ Պայմանավորվող Կողմի քաղաքացիները:

Հոդված 6. Տուրքերի և մյուս դատական ծախսերի վճարումից ազատումը, դրանց նվազեցումը և անվճար իրավական օգնությունը

1. Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացիները մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում կարող են օգտվել տուրքերի և մյուս դատական ծախսերի վճարումից ազատման կամ դրանց նվազեցման արտոնություններից, ինչպես նաև օգտվել անվճար իրավական օգնությունից նույն պայմաններով, ինչ այդ Պայմանավորվող Կողմի քաղաքացիները:

2. Պայմանավորվող Կողմերից մեկի արդարադատության հիմնարկի կողմից որևէ կոնկրետ գործով տրամադրված սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված արտոնությունները տարածվում են այդ գործի վարույթի բոլոր փուլերի նկատմամբ՝ ներառյալ կատարման փուլը:

Հոդված 7. Վճարման արտոնությունների ստացման պայմանները

1. Մի Պայմանավորվող Կողմի քաղաքացիները սույն Պայմանագրի 6-րդ հոդվածով նախատեսված արտոնություններ ստանալու դիմումը ներկայացնելիս միաժամանակ պետք է ներկայացնեն տեղեկանք իրենց ֆինանսական և անձնական դրության մասին՝ տրված Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան:

2. Եթե դիմողը Պայմանավորվող Կողմերից ոչ մեկի տարածքում բնակության կամ գտնվելու վայր չունի, ապա սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված տեղեկանքը կարող է տրվել այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից, որի քաղաքացի է հանդիսանում այդ անձը:

Հոդված 8. Վճարման արտոնությունների համար դիմելը

1. Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացիները, որոնք ցանկություն ունեն մյուս Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկին դիմելու սույն Պայմանագրի 6-րդ հոդվածով նախատեսված արտոնությունները ստանալու համար, այդ նպատակով կարող են դիմում ներկայացնել իրենց բնակության կամ գտնվելու վայրի համապատասխան արդարադատության հիմնարկին:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն դիմում ստացած արդարադատության հիմնարկը դիմումն ուղարկում է մյուս Պայմանավորվող Կողմի համապատասխան արդարադատության հիմնարկ՝ դրան կցելով տեղեկանքը և, առկայության դեպքում՝ մյուս փաստաթղթերը:

3. Արդարադատության հիմնարկը, որն իրավասու է որոշումներ ընդունել սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված դիմումների վերաբերյալ, իրավունք ունի ստուգելու իրեն ներկայացված տեղեկանքների և տեղեկատվության իսկությունը, ինչպես նաև վերջնական ճշգրտման նպատակով պահանջելու լրացուցիչ տեղեկություններ:

Հոդված 9. Հաղորդակցման եղանակը

1. Իրավական օգնություն ցույց տալու հետ կապված բոլոր հարցերով երկու Պայմանավորվող Կողմերի արդարադատության հիմնարկները միմյանց հետ հաղորդակցվում են իրենց կենտրոնական մարմինների միջոցով, եթե սույն Պայմանագրով այլ բան չի նախատեսված:

2. Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված կենտրոնական մարմիններն են.

ա) Հայաստանի Հանրապետության համար՝ արդարադատության նախարարությունը կամ գլխավոր դատախազը.

բ) Ռուսիինիայի համար՝ արդարադատության նախարարությունը:

Հոդված 10. Օգտագործվող լեզուն

1. Սույն Պայմանագրի դրույթների կիրառման համար երկու Պայմանավորվող Կողմերի կենտրոնական մարմինները իրենց հարաբերություններում օգտագործում են իրենց պետությունների պաշտոնական լեզուները կամ անգլերենը: Նույնը վերաբերվում է նաև

Պայմանավորվող Կողմերի արդարադատության հիմնարկների միջև հաղորդակցմանը, եթե սույն Պայմանագրով այլ բան չի նախատեսված:

2. Իրավական օգնության մասին հանձնարարությունը և դրան կից փաստաթղթերը կազմվում են հայցող Պայմանավորվող Կողմի լեզվով և ուղեկցվում են վավերացված թարգմանությամբ՝ հայցվող Պայմանավորվող Կողմի լեզվով:

3. Արդարադատության հիմնարկները իրավական օգնության համար դիմելիս կարող են օգտագործել երկու Պայմանավորվող Կողմերի լեզուներով ձևեր, որոնք հաստատվում են նրանց արդարադատության նախարարությունների կողմից:

4. Իրավական օգնության մասին հանձնարարությունների կատարումն իրականացվում է հայցվող Պայմանավորվող Կողմի լեզվով:

#### Հոդված 11. Օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը

Պայմանավորվող Կողմերը՝ ըստ խնդրանքի, փոխադարձաբար միմյանց տեղեկացնում են իրենց պետություններում գործող կամ նախկինում գործած օրենսդրության, ինչպես նաև արդարադատության հիմնարկների կողմից դրա կիրառման պրակտիկայի մասին:

#### Հոդված 12. Վկաների և փորձագետների պաշտպանությունը

1. Վկան կամ փորձագետը՝ անկախ նրա քաղաքացիությունից, որը ըստ մյուս Պայմանավորվող Կողմի ծանուցագրի ներկայացել է այդ Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկ, չի կարող նրա տարածքում ենթարկվել քրեական կամ վարչական պատասխանատվության, կալանքի կամ իր անձնական ազատության այլ սահմանափակումների՝ այն արարքների համար, որոնք նա կատարել է նախքան հայցող Պայմանավորվող Կողմի սահմանն անցնելը:

Այդ անձը չի կարող նաև պատասխանատվության ենթարկվել, կալանքի վերցվել կամ դատապարտվել այն քրեական գործով որպես վկա իր տված ցուցմունքների կամ որպես փորձագետ տված եզրակացության կապակցությամբ, որը հանդիսանում է քննության առարկա:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված, անձեռնմխելիությունը դադարում է, եթե վկան կամ փորձագետը չի հեռանում հայցող Պայմանավորվող Կողմի տարածքից 15 օրվա ընթացքում այն օրվանից հետո, երբ արդարադատության հիմնարկը տեղեկացնում է իր ներկայության այլևս անհրաժեշտ չլինելու մասին, կամ եթե հետագայում նա հետ է վերադառնում:

Այդ ժամկետի մեջ չի հաշվարկվում այն ժամանակը, երբ վկան կամ փորձագետը չի կարողացել հայցող Պայմանավորվող Կողմի տարածքից հեռանալ իրենից անկախ պատճառներով:

#### Հոդված 13. Վկաների և փորձագետների ծախսերի հատուցումը

1. Վկայի կողմից ցուցմունքներ տալու կամ փորձագետի կողմից փորձաքննություն անցկացնելու հետ կապված ճանապարհածախսի և կեցության ծախսերի, ինչպես նաև չստացված եկամուտների համար փոխհատուցումը կատարում է հայցող

Պայմանավորվող Կողմը: Փորձագետը իրավունք ունի նաև իր կատարած աշխատանքի դիմաց փոխհատուցում ստանալ:

2. Ծանուցագրի մեջ պետք է նշվեն, թե ինչ հատուցման իրավունք ունեն ստանալու կանչվող անձինք: Վկայի կամ փորձագետի խնդրանքով՝ հայցող Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկը կանխավճար է տալիս համապատասխան ծախսերը մասամբ կամ ամբողջությամբ ծածկելու համար:

3. Մի Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկի կողմից մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում բնակվող վկային կամ փորձագետին ուղարկված ծանուցագիրը չպետք է պարունակի չներկայանալու դեպքում պատժամիջոցներ կիրառելու սպառնալիք:

Հոդված 14. Կալանքի տակ գտնվող անձանց որպես վկա հարցաքննելը

1. Եթե անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի մի Պայմանավորվող Կողմի տարածքում կալանքի տակ գտնվող անձը որպես վկա հանդես գա մյուս Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկում, ապա սույն Պայմանագրի 9-րդ հոդվածում նշված կենտրոնական մարմինները կարող են պայմանավորվել հայցող Պայմանավորվող Կողմի տարածք այդ անձին փոխանցելու վերաբերյալ՝ նրան կալանքի տակ պահելուց և հարցաքննելուց հետո ոչ ուշ քան 10 օրվա ընթացքում վերադարձնելու պայմանով:

2. Փոխանցումը կարող է մերժվել, եթե.

ա) կալանքի տակ գտնվող անձը համաձայն չէ դրան.

բ) նրա ներկայությունն անհրաժեշտ է հայցվող Պայմանավորվող Կողմի տարածքում իրականացվող քրեական գործի վարույթի ընթացքում.

գ) փոխանցման դեպքում կերկարացվի նրա կալանքի տակ գտնվելու ժամկետը.

դ) հայցող Պայմանավորվող Կողմի տարածք այդ անձի փոխանցման համար առաջացել են այլ խոչընդոտներ: Փոխանցման մերժման մասին հայցվող Պայմանավորվող Կողմը անհապաղ տեղեկացնում է հայցող Պայմանավորվող Կողմին՝ նշելով մերժման դրդապատճառները:

Մ Ա Ս Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 1

ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 15. Իրավական օգնության ծավալը

Քաղաքացիական գործերով իրավական օգնությունը ներառում է դատավարական գործողությունների կատարումը, ինչպիսիք են. դատական և արտադատական փաստաթղթերի կազմումը, փոխանցումը և հանձնումը. կողմերի, վկաների,

փորձագետների և այլ անձանց հարցաքննումը. փորձաքննությունների անցկացումը. զննության և քննության կատարումը և որոշ փաստերի հայտնաբերումը. ապահովման և պահպանման միջոցների կիրառումը. փաստաթղթերի ստուգումը. փաստաթղթերի պատճենների, լուսապատճենների և փաստաթղթերից քաղվածքների ստացումը:

Հոդված 16. Իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարությունը

1. Իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարությունը պետք է բովանդակի հետևյալ տվյալները.

ա) հայցող արդարադատության հիմնարկի անվանումը.

բ) հնարավորության դեպքում, հայցվող արդարադատության հիմնարկի անվանումը.

գ) այն գործի անվանումը, որով հայցվում է իրավական օգնությունը.

դ) կողմերի անունները և ազգանունները, նրանց քաղաքացիությունը, բնակության կամ գտնվելու վայրը, դատավարական գործունեությունը, իսկ իրավաբանական անձանց համար՝ նրանց անվանումը և գտնվելու վայրը.

ե) առկայության դեպքում՝ կողմերի ներկայացուցիչների անունները, ազգանունները և հասցեները.

զ) հանձնարարության բովանդակությունը, ինչպես նաև դրա կատարման համար անհրաժեշտ մյուս տվյալները.

է) հանձնարարությունը կից փաստաթղթերի ցանկը:

2. Փաստաթղթի հանձնման մասին հանձնարարությունում պետք է նշված լինեն ստացողի ճշտգրիտ հասցեն և հանձնման ենթակա փաստաթղթերի բնույթը:

Հանձնարարությունում պետք է նշվեն այն հանգամանքները, որոնք առնչվում են ապացույցների ներկայացման հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հարցաքննման ենթակա անձանց ուղղվելիք հարցերը:

3. Իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարությունը և դրան կից փաստաթղթերը պետք է կնքված լինեն հայցող արդարադատության հիմնարկի պաշտոնական կնիքով:

Հոդված 17. Հանձնարարության կատարման կարգը

1. Հայցվող արդարադատության հիմնարկը իրավական օգնության մասին հանձնարարությունը կատարելիս կիրառում է իր պետության օրենսդրությունը: Հայցող արդարադատության հիմնարկի խնդրանքով՝ հայցվող արդարադատության հիմնարկը կարող է կիրառել նաև հատուկ կանոններ, եթե դրանք չեն հակասում իր պետության օրենսդրությանը:

2. Եթե հայցվող արդարադատության հիմնարկը իրավասու չէ կատարել հանձնարարությունը, ապա այն ուղարկում է համապատասխան իրավասու հիմնարկին՝ այդ մասին ժամանակին տեղեկացնելով հայցող արդարադատության հիմնարկին:

3. Հայցվող արդարադատության հիմնարկը՝ հայցող արդարադատության հիմնարկի խնդրանքով, վերջինիս ժամանակին տեղեկացնում է իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարության կատարման վայրի և ժամկետի մասին:

4. Եթե անհայտ է այն անձի հասցեն, որի վերաբերյալ իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարություն է ստացվել կամ եթե պարզվում է, որ նշված հասցեն ոչ ճիշտ է կամ թերի, ապա հայցվող արդարադատության հիմնարկը համապատասխան քայլեր է ձեռնարկում հասցեն պարզելու նպատակով: Եթե հասցեն պարզելը անհնար է, ապա հայցվող արդարադատության հիմնարկը այդ մասին տեղեկացնում է հայցող արդարադատության հիմնարկին:

5. Հանձնարարությունը կատարելուց հետո հայցվող արդարադատության հիմնարկը համապատասխան փաստաթղթերն ուղարկում է հայցող արդարադատության հիմնարկին:

Այն դեպքում, երբ իրավական օգնություն չի կարող ցույց տրվել, հայցվող արդարադատության հիմնարկը փաստաթղթերը վերադարձնում է հայցող արդարադատության հիմնարկին՝ տեղեկացնելով հանձնարարության կատարմանը խոչընդոտ հանդիսացող հանգամանքների մասին:

#### Հոդված 18. Փաստաթղթերի հանձնումը

Հայցվող արդարադատության հիմնարկը փաստաթղթերը հանձնում է իր պետության օրենսդրության պահանջներին համապատասխան՝ պայմանով, որ այդ փաստաթղթերը կազմված լինեն սույն Պայմանագրի 10-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Հակառակ դեպքում, հայցվող արդարադատության հիմնարկը փաստաթղթերը հասցեատիրոջն է հանձնում միայն այն դեպքում, եթե հասցեատերը համաձայն է դրանք ստանալ:

#### Հոդված 19. Փաստաթղթերի հանձնման մասին տեղեկանքը

Փաստաթղթերի հանձնման մասին կազմվում է տեղեկանք՝ հայցվող Պայմանավորվող Կողմի տարածքում գործող հանձնման կանոններին համապատասխան: Մակայն, բոլոր դեպքերում, տեղեկանքը պետք է պարունակի հասցեատիրոջ կամ փաստաթղթերը ստացած անձի ստորագրությունը, հանձնարարությունը կատարող արդարադատության հիմնարկի կնիքը և փաստաթղթերի հանձնման համար այդ հիմնարկի պատասխանատու անձի ստորագրությունը, ինչպես նաև հանձնման միջոցը, վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը: Եթե հասցեատերը հրաժարվել է փաստաթղթերն ընդունելուց, ապա պետք է նշվեն նաև հրաժարման շարժառիթները:

#### Հոդված 20. Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների լիազորությունները

Պայմանավորվող Կողմերը իրավունք ունեն մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում գտնվող իրենց քաղաքացիներին դատական կամ արտադատական փաստաթղթեր փոխանցել կամ նրանց հարցաքննել իրենց դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների միջոցով: Սույն հոդվածով նախատեսված դեպքում դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները չեն կարող հարկադրանք կիրառել:

Հոդված 21. Իրավական օգնություն ցույց տալու հետ կապված ծախսերը

Պայմանավորվող Կողմերն իրենք են կատարում իրենց տարածքում իրավական օգնություն ցույց տալու հետ կապված ծախսերը՝ ներառյալ ապացույցների հայթայթման հետ կապված ծախսերը:

Հոդված 22. Իրավական օգնություն ցույց տալու մերժումը

Իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարության կատարումը կարող է մերժվել, եթե հայցվող Պայմանավորվող Կողմը գտնում է, որ հանձնարարության կատարումը վնաս կհասցնի իր պետականության հիմնարար սկզբունքներին:

Գ Լ ՈՒ Խ 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հոդված 23. Փաստաթղթերի վավերականությունը

1. Պայմանավորվող Կողմերից որևէ մեկի արդարադատության հիմնարկների կամ իրավասու այլ մարմինների կողմից պատրաստված կամ հաստատված փաստաթղթերը, ինչպես նաև մասնավոր անձանց ստորագրությամբ փաստաթղթերը, որոնց վրա նշված են տարին, ամիսը և ամսաթիվը, և մասնավոր անձի ստորագրության իսկությունը սահմանված կարգով հաստատված է, մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում վավերական են առանց որևէ օրինականացման: Նույն կանոնը կիրառվում է նաև փաստաթղթերից կատարված քաղվածքների և պատճենների նկատմամբ, եթե դրանք հաստատված են որպես իսկական պատճեններ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը, որոնք մի Պայմանավորվող Կողմի տարածքում դիտվում են որպես պաշտոնական փաստաթղթեր, մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ վերջին Պայմանավորվող Կողմի պատրաստած նույն տեսակի փաստաթղթերը:

3. Պայմանավորվող Կողմերի ցանկացած շահագրգիռ անձ կամ ցանկացած մարմին կարող է խնդրել մյուս Պայմանավորվող Կողմի իրավասու մարմիններին պարզելու տրված փաստաթղթի վավերականությունը, եթե դրա վերաբերյալ կասկածներ են առաջացել:

Հոդված 24. Քաղաքացիական կացության մասին փաստաթղթերի փոխանցումը

1. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի համապատասխան արդարադատության հիմնարկները՝ մյուս Պայմանավորվող Կողմի համապատասխան արդարադատության հիմնարկների դիմումով, վերջիններիս անվճար փոխանցում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականները, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյաններից քաղվածքները, ինչպես նաև դատական մարմինների կողմից քաղաքացիական կացության վերաբերյալ ընդունված որոշումների



- պատճենները, եթե դրանք վերաբերվում են հայցող Պայմանավորվող Կողմի քաղաքացիներին և պահանջվում են պաշտոնական նպատակների համար:
2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթը կիրառվում է նաև այն դեպքում, երբ հայցվող փաստաթուղթը վերաբերվում է երրորդ պետության քաղաքացուն:
  3. Դիմումը կարող է տրվել նաև էլնելով երկու Պայմանավորվող Կողմերի քաղաքացիների շահերից: Այդ դեպքում փաստաթուղթը տրվում է՝ գանձելով փաստաթուղթը տվող Պայմանավորվող Կողմի ֆինանսական օրենսդրությամբ սահմանված վճարը:
  4. Դիմումում պետք է նշված լինեն բոլոր անհրաժեշտ տվյալները, ինչպես նաև դիմումի նպատակը՝ «պաշտոնական նպատակով» թե «քաղաքացու շահերի համար»:
  5. Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված փաստաթղթերի փոխանցումը կատարվում է Պայմանավորվող Կողմերի արդարադատության նախարարությունների միջոցով:

### Գ Լ ՈՒ Խ 3

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԻՐԱՎՈՐՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

### Հ Ա Տ Վ Ա Ծ 1

ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Հոդված 25. Իրավունակություն

1. Ֆիզիկական անձի իրավունակությունը և գործունակությունը որոշվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացի է հանդիսանում այդ անձը:
2. Իրավաբանական անձի իրավունակությունը որոշվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում է նրա գտնվելու վայրը:

### Հոդված 26. Ամուսնություն

1. Ամուսնության ձևը կարգավորվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում կատարվում է ամուսնությունը:
2. Այն դեպքում, եթե ամուսնությունը կատարվում է դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում, այդպիսի ամուսնության ձևը որոշվում է այդ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի պատկանելության Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ:
3. Ինչ վերաբերում է ամուսնության համար անհրաժեշտ պայմաններին, ապա ապագա ամուսիններից յուրաքանչյուրի նկատմամբ կիրառվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ պայմանները, որի քաղաքացի է նա հանդիսանում:

### Հոդված 27. Ամուսինների իրավահարաբերությունները

1. Ամուսինների անձնական և գույքային իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին են նրանք հանդիսանում:
  2. Եթե ամուսիններից մեկը մի Պայմանավորվող Կողմի քաղաքացի է, իսկ մյուսը՝ մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացի, նրանց անձնական և գույքային իրավահարաբերությունները կարգավորվում են այն Պայմանավորվող Կողմի օրենքով, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր:
  3. Եթե սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում ամուսիններից մեկը բնակվում է մի Պայմանավորվող Կողմի տարածքում, իսկ մյուսը՝ մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, նրանց անձնական և գույքային իրավահարաբերությունները կարգավորվում են այն Պայմանավորվող Կողմի օրենքով, որի տարածքում էր գտնվում նրանց վերջին համատեղ բնակության վայրը:
- Եթե ամուսինները համատեղ բնակության վայր չեն ունեցել, ապա իրավասու են համարվում երկու Պայմանավորվող Կողմերի համապատասխան արդարադատության հիմնարկները, և նրանք կիրառում են իրենց համապատասխան պետության օրենսդրությունը:
4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետով, ինչպես նաև 3-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված իրավահարաբերությունների վերաբերյալ որոշում ընդունելու իրավասությունը պատկանում է այն Պայմանավորվող Կողմի համապատասխան արդարադատության հիմնարկին, որի օրենքը կարգավորում է այդ հարաբերությունները:

**Հոդված 28. Ամուսնալուծություն**

1. Ամուսնալուծության դեպքում, եթե երկու ամուսիններն էլ մի Պայմանավորվող Կողմի քաղաքացիներ են, բայց ամուսնալուծության մասին դիմումի ներկայացման օրվա դրությամբ բնակվում են մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, ապա կիրառվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությունը, որի քաղաքացի են նրանք հանդիսանում: Իրավասությունը պատկանում է երկու Պայմանավորվող Կողմի դատարաններին:
2. Եթե ամուսնալուծության հայցի ներկայացման պահի դրությամբ ամուսիններից մեկը հանդիսանում է Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացի, իսկ մյուսը՝ մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացի, և նրանք երկուսն էլ բնակվում են նույն Պայմանավորվող Կողմի տարածքում, կամ մեկը բնակվում է մի Պայմանավորվող Կողմի տարածքում, իսկ մյուսը՝ մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, ապա իրավասու են համարվում երկու Պայմանավորվող Կողմերի դատարանները, որոնք ամուսնալուծության հարցը լուծելիս կիրառում են իրենց պետության օրենսդրությունը:

**Հոդված 29. Ամուսնության անվավերությունը**

1. Ամուսնությունն անվավեր ճանաչելու համար կիրառվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությունը, որը՝ սույն Պայմանագրի 26-րդ հոդվածի համաձայն, կիրառվում է ամուսնության նկատմամբ:

2. Իրավասության առնչությամբ համապատասխանորեն կիրառվում են սույն Պայմանագրի 28-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 30. Հայրության ճանաչումը

1. Հայրության ճանաչման և վիճարկման հետ կապված գործերով կիրառվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությունը, որի քաղաքացի է հանդիսանում երեխան: Եթե երեխան բնակվում է մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, ապա կիրառվում է վերջինիս օրենսդրությունը, եթե այն երեխայի շահերի պահպանման տեսակետից ավելի նպաստավոր է:
2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը պատկանում է այն Պայմանավորվող Կողմի համապատասխան արդարադատության հիմնարկին, որի քաղաքացի է հանդիսանում երեխան:
3. Եթե երեխայի առնչությամբ ծագած վեճով հայցվորը և պատասխանողը բնակվում են նույն Պայմանավորվող Կողմի տարածքում, ապա իրավասու են համարվում նաև այդ Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկները:

Հոդված 31. Ծնողների և երեխաների միջև իրավահարաբերությունները

1. Ծնողների և իրենց երեխայի միջև իրավահարաբերությունները կարգավորվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացի է հանդիսանում երեխան: Եթե երեխան բնակվում է մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, ապա կիրառվում է վերջինիս օրենսդրությունը, եթե այն երեխայի շահերի համար ավելի նպաստավոր է:
2. Արդարադատության հիմնարկների իրավասության առնչությամբ համապատասխանորեն կիրառվում են սույն Պայմանագրի 30-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթները:

Հոդված 32 Որդեգրում

1. Որդեգրման համար անհրաժեշտ պայմանները որոշվում են որդեգրողի և որդեգրվողի ազգային օրենսդրությամբ: Նրանք նաև պետք է կատարեն իրենց յուրաքանչյուրի ազգային օրենսդրությամբ նախատեսված պարտադիր պահանջները:
2. Որդեգրման ձևը որոշվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում այն իրականացվում է:
3. Որդեգրման հետևանքները և որդեգրողի ու որդեգրվողի իրավահարաբերությունները կարգավորվում են որդեգրողի ազգային օրենսդրությամբ, իսկ եթե որդեգրումը կատարվել է ամուսինների համաձայնությամբ՝ ապա սույն Պայմանագրի 27-րդ հոդվածի համաձայն ամուսնության իրավական հետևանքները կարգավորվող օրենսդրությամբ:
4. Որդեգրման անհրաժեշտ պայմանների չկատարման պատճառով դրա անվավերության հարցը որոշվում է սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված օրենսդրությամբ, իսկ որդեգրման ձևի վերաբերյալ պահանջների չկատարման պատճառով՝ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված օրենսդրությամբ:

5. Որդեգրման գործերով իրավասու են այն Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկները, որի քաղաքացին էր հանդիսանում որդեգրվողը՝ որդեգրման պահին:

Հոդված 33. Գործունակության սահմանափակում

1. Հոգեկան հիվանդության կամ այլ տկարության պատճառով անձանց գործունակության սահմանափակման, ինչպես նաև դրա վերացման կարգը և պայմանները որոշվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացի է հանդիսանում այդ անձը:

2. Գործունակության սահմանափակման գործերով իրավասու են այն Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկները, որի քաղաքացի է հանդիսանում գործունակության սահմանափակման ենթարկվող անձը, եթե սույն Պայմանագրով այլ բան չի նախատեսված:

Հոդված 34. Գործունակության սահմանափակման անհրաժեշտության մասին հայտնելը

1. Եթե անհրաժեշտություն է առաջանում սահմանափակել Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացու գործունակությունը, որը բնակվում է մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում կամ էլ այդ տարածքում գտնվող գույքի սեփականատեր է, ապա վերջին Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկը այդ մասին անհապաղ տեղեկացնում է սույն Պայմանագրի 33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավասու արդարադատության հիմնարկին:

2. Անհետաձգելի դեպքերում, մյուս Պայմանավորվող Կողմի հիմնարկը՝ իր օրենսդրությանը համապատասխան, կարող է նախնական միջոցներ ձեռնարկել, սակայն այդ մասին նա պետք է տեղեկացնի 33-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն իրավասու համարվող հիմնարկին՝ տեղեկանքին կցելով ընդունված փաստաթղթերի պատճենները: Ձեռնարկված միջոցները վավերական են և իրավաբանական ուժ ունեն մինչև իրավասու արդարադատության հիմնարկի կողմից այլ որոշում ընդունելը:

Հոդված 35. Գործունակության սահմանափակման իրավասության փոխանցումը

1. Սույն Պայմանագրի 33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված արդարադատության հիմնարկները անձի գործունակության սահմանափակման իրենց իրավասությունը կարող են փոխանցել մյուս Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկին, եթե գործունակության սահմանափակման ենթակա անձը մշտապես բնակվում կամ գտնվում է վերջին Պայմանավորվող Կողմի տարածքում կամ այդ տարածքում գտնվող գույքի սեփականատեր է: Գործունակության սահմանափակման վերաբերյալ իրավունքը փոխանցված է համարվում այն օրվանից, երբ հայցվող արդարադատության հիմնարկն ընդունում է այդ իրավունքը և այդ մասին տեղեկացնում է հայցող հիմնարկին:

2. Եթե սույն Պայմանագրի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տեղեկացված իրավասու արդարադատության հիմնարկը մյուս կողմին չի պատասխանում

տեղեկացումն ուղարկվելուց 3 ամսվա ընթացքում, ապա գործունակության սահմանափակման իրավունքը պատկանում է այն Պայմանավորվող Կողմի իրավասու արդարադատության հիմնարկին, որի տարածքում մշտապես բնակվում կամ գտնվում է գործունակության սահմանափակման ենթակա անձը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետի համաձայն իրավասու դարձած արդարադատության հիմնարկը գործունակության սահմանափակման վերաբերյալ որոշումները ընդունում է իր երկրի օրենսդրությանը համապատասխան, բայց միայն այն դեպքում, եթե անձի գործունակության սահմանափակման հնարավորությունը նախատեսված է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացի է հանդիսանում նա:

4. Գործունակության սահմանափակման վերաբերյալ սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան ընդունված որոշման մասին պատճենը պետք է ուղարկվի սույն Պայմանագրի 33-րդ հոդվածի 2-րդ կետերով նախատեսված արդարադատության հիմնարկին:

#### Հոդված 36. Խնամակալություն և հոգաբարձություն

1. Խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու և վերացնելու հիմքերը և պայմանները որոշվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացու նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն է սահմանվում:

2. Խնամակալությունը կամ հոգաբարձությունը ընդունելու պարտականության նկատմամբ կիրառվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությունը, որի քաղաքացին խնամակալ կամ հոգաբարձու է նշանակվում:

3. Խնամակալի կամ հոգաբարձուի և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց միջև իրավահարաբերությունները սահմանվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի արդարադատության հիմնարկը որոշում է ընդունել խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու մասին:

4. Պայմանավորվող Կողմերի քաղաքացիների նկատմամբ խնամակալության կամ հոգաբարձության գործերով իրավասու է այն Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկը, որի քաղաքացի է այն անձը, որի նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն է սահմանվել, եթե սույն Պայմանագրով այլ բան չի նախատեսված:

5. Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացին կարող է նշանակվել մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացու խնամակալ կամ հոգաբարձու, եթե նա մշտապես բնակվում է խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանած Պայմանավորվող Կողմի տարածքում, և եթե նրան խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը բխում է խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի շահերից:

6. Սույն Պայմանագրի 34-րդ հոդվածի, ինչպես նաև 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև խնամակալության և հոգաբարձության նկատմամբ:

#### Հոդված 37. Կիրառվող օրենսդրությունը

Սույն Պայմանագրի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն իրավասու դարձած արդարադատության հիմնարկը խնամակալություն կամ հոգաբարձություն է

սահմանում իր պետության օրենսդրությանը համապատասխան: Մակայն իրավունակության և գործունակության հարցերով կիրառվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությունը, որի քաղաքացի է հանդիսանում խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը:

Իրավասու արդարադատության հիմնարկն իրավունք չունի այնպիսի որոշումներ ընդունել, որոնք առնչվում են խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի կարգավիճակին: Մակայն եթե համապատասխան արդարադատության հիմնարկը՝ իր երկրի օրենսդրության համաձայն, ունի այդպիսի իրավասություն, ապա կարող է խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի ամուսնության վերաբերյալ համաձայնություն տալ այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացին է հանդիսանում խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը:

Հոդված 38. Անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը և մահվան ամսաթիվը հաստատելը

1. Անձին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու, ինչպես նաև նրա մահվան տարին, ամիսն ու ամսաթիվը հաստատելու դատական գործերով իրավասու են այն Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկները, որի քաղաքացի էր հանդիսանում այդ անձը ողջ եղած ժամանակ՝ իր մասին վերջին տեղեկությունների համաձայն:
2. Որպես բացառություն սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգից՝ Պայմանավորվող Կողմերից մեկի իրավասու արդարադատության հիմնարկները՝ իր տարածքում մշտապես բնակվող անձանց խնդրանքով, իրավասու են մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչել, ինչպես նաև հաստատել նրա մահվան տարին, ամիսն ու ամսաթիվը, եթե հայցվող Պայմանավորվող Կողմի օրենսդրության համաձայն այդ անձինք այդպիսի հարցերով դիմումներ ներկայացնելու իրավունք ունեն:
3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետում հիշատակված գործերով արդարադատության հիմնարկները կիրառում են իրենց երկրի համապատասխան օրենսդրությունը:

Հ Ա Տ Վ Ա Ծ 2

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 39. Իրավահավասարության սկզբունքը

Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացիները մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում ըստ օրենքի կամ կտակի գույք կամ իրավունքներ ժառանգելու, ինչպես նաև իրենց գույքի կամ իրավունքների վերաբերյալ կտակ կազմելու կամ կտակը վերացնելու՝ վերջին Պայմանավորվող Կողմի քաղաքացիների հետ հավասար իրավունք ունեն:

Հոդված 40. Կիրառվող օրենսդրությունը

1. Շարժական գույքի ժառանգման իրավունքը որոշվում և կարգավորվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է համարվել ժառանգատուն իր մահվան պահին:
2. Անշարժ գույքի ժառանգման իրավունքը կարգավորվում է այդ գույքի գտնվելու վայրի Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ:

#### Հոդված 44. Մահվան մասին տեղեկացնելը

1. Երբ Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացին մահանում է մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, վերջին Պայմանավորվող Կողմի իրավասու արդարադատության հիմնարկն այդ մասին պետք է անհապաղ տեղեկացնի մյուս Պայմանավորվող Կողմի դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին՝ հայտնելով ժառանգների, նրանց բնակության կամ գտնվելու վայրի, ժառանգության կազմի և գույքի արժեքի, իսկ կտակի առկայության դեպքում՝ նաև դրա վերաբերյալ բոլոր եղած տեղեկությունները:
2. Ժառանգության վերաբերյալ սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկություններն ստացած դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը պետք է ստացված բոլոր տեղեկությունները փոխանցի իր երկրի իրավասու արդարադատության հիմնարկին՝ գույքի պահպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նպատակով:
3. Եթե ժառանգությունը բացվել է Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքում և հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ առկա են մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացի հանդիսացող ժառանգներ, ապա առաջին Պայմանավորվող Կողմի իրավասու արդարադատության հիմնարկն այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնի վերջին Պայմանավորվող Կողմի դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին:

#### Հոդված 45. Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների իրավունքները

Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքում ժառանգություն բացվելու դեպքում, մյուս Պայմանավորվող Կողմի դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները առանց որևէ հատուկ լիազորության, իրավունք ունեն միջոցներ ձեռնարկելու այդ հիմնարկում իրենց քաղաքացիների շահերի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ, եթե այդ քաղաքացիները բացակա են կամ ներկայացուցիչ չեն նշանակել:

#### Հոդված 46. Գույքի պահպանման միջոցները

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկները՝ իրենց համապատասխան պետությունների օրենսդրության համաձայն, անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն իրենց տարածքում գտնվող այն գույքի պահպանման և կառավարման

ուղղությամբ, որը մնացել է մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացու մահվան հետևանքով, կամ որի նկատմամբ մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացին իրավունքներ ունի:

2. Սույն Հոդվածի 1-ին կետում նշված արդարադատության հիմնարկները, համապատասխան Պայմանավորվող Կողմի դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին պետք է անհապաղ տեղեկացնեն իրենց կողմից ձեռնարկված պահպանման և կառավարման միջոցների մասին:

Դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը կարող է ներգրավվել այդ միջոցների իրականացմանը ուղղակիորեն կամ իր կողմից նշանակված ներկայացուցչի միջոցով:

Դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի առաջարկությամբ՝ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցառումները կարող են փոփոխվել կամ վերացվել:

3. Սույն Պայմանագրի 43-րդ հոդվածի 1-ին կետում նշված իրավասու արդարադատության հիմնարկը կարող է պահանջել դադարեցնել կամ վերացնել սույն հոդվածի 1-ին կետի հիման վրա կատարվող գործողությունները:

#### Հոդված 47. Կտակի բացումը

1. Կտակի բացումը այն Պայմանավորվող Կողմի իրավասու արդարադատության հիմնարկի բացառիկ իրավունքն է, որի տարածքում է գտնվում կտակը: Կտակի վավերացված պատճենը և դրա բացման, վիճակի և բովանդակության մասին արձանագրությունը, իսկ պահանջի դեպքում՝ նաև կտակի իսկականը, ուղարկվում են մյուս Պայմանավորվող Կողմի իրավասու արդարադատության հիմնարկին, եթե մահացածը այդ Պայմանավորվող Կողմի քաղաքացին է եղել, կամ եթե այդ վերջին Պայմանավորվող Կողմի հիմնարկն իրավասու է իրականացնել ժառանգական վարույթը:

2. Այն Պայմանավորվող Կողմի իրավասու արդարադատության հիմնարկը, որի քաղաքացին է հանդիսացել կտակարարը իր մահվան պահին և որի պահպանության ներքո է գտնվում կտակը, վերջինիս վավերացված պատճենը ուղարկում է ժառանգության վերաբերյալ իրավական գործողություններ կատարելու համար իրավասու արդարադատության հիմնարկին՝ վերջինիս խնդրանքով:

#### Հոդված 48. Գույքի փոխանցումը

1. Շարժական գույքը կամ դրամական միջոցները, որոնք ձեռք են բերվել Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքում գտնվող ժառանգական շարժական կամ անշարժ գույքի վաճառքից և պատկանում են մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացի հանդիսացող և այդ Կողմի կամ երրորդ պետության տարածքում բնակվող ժառանգներին, ժառանգական վարույթի ավարտից հետո պետք է փոխանցվեն այդ ժառանգներին: Եթե ժառանգներն անձամբ չեն ներկայանում կամ ներկայացուցիչ չեն նշանակում վերը նշված գույքը կամ դրամական միջոցներն ընդունելու համար, ապա այդ գույքը կամ դրամական միջոցները փոխանցվում են այն Պայմանավորվող Կողմի



դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին, որի քաղաքացիներն են հանդիսանում այդ ժառանգները:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերում փոխանցումը կատարվում է, եթե.

ա) գույքի գտնվելու վայրի Պայմանավորվող Կողմին մուծվել կամ երաշխավորվել են ժառանգության առնչությամբ այդ Կողմի օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը և մյուս պարտադիր վճարումները.

բ) բավարարվել կամ երաշխավորվել են մահացած անձի պարտատերերի և ժառանգությանն առնչվող՝ սահմանված կարգով ժամանակին ներկայացված մյուս պահանջները՝ համաձայն այն Պայմանավորվող Կողմի օրենսդրության, որի տարածքում է գտնվում նշված շարժական գույքը, ներառյալ դրամական միջոցները.

գ) շարժական գույքի գտնվելու վայրի Պայմանավորվող Կողմի իրավասու հիմնարկները թույլատրել են այդ շարժական գույքի կամ դրամական միջոցների արտահանումը:

3. Եթե Պայմանավորվող Կողմերից մեկի քաղաքացին մահանում է մյուս

Պայմանավորվող Կողմի տարածքով երթևեկելու ժամանակ, որտեղ նա բնակության կամ գտնվելու վայր չի ունեցել, ապա այդ քաղաքացու ուղեբեռը՝ առանց որևէ ընթացակարգի անցկացման, փոխանցվում է այն Պայմանավորվող Կողմի դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին, որի քաղաքացին է հանդիսացել մահացածը:

### Հ Ա Տ Վ Ա Ծ 3

#### ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 49. Քաղաքացիաիրավական պայմանագրերին ներկայացվող պահանջները

1. Քաղաքացիաիրավական պայմանագրերի պայմանների նկատմամբ կիրառվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը, որի տարածքում կնքվել են այդ պայմանագրերը, եթե այլ բան չի սահմանվել պայմանագրի կողմերի համաձայնությամբ այն դեպքում, եթե նրանք՝ երկու Պայմանավորվող Կողմերի օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունեն կիրառվող օրենսդրություն ընտրել:

2. Պայմանագրի ձևի նկատմամբ կիրառվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրության պահանջները, որի տարածքում կնքվել է պայմանագիրը:

3. Վեճերի լուծման իրավասությունը պատկանում է այն Պայմանավորվող կողմի արդարադատության հիմնարկին, որի տարածքում է գտնվում պատասխանողի բնակության վայրը կամ գտնվելու վայրը: Վեճերի լուծման իրավասությունը պատկանում է նաև այն Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկին, որի տարածքում է գտնվում վեճի առարկա հանդիսացող գույքը:

### Հ Ա Տ Վ Ա Ծ 4

#### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոդված 50. Կիրառվող օրենսդրությունը և իրավասությունը

1. Քաղաքացիական իրավախախտումների համար պատասխանատվությունը որոշվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում կատարվել է իրավախախտումը:
2. Եթե վնաս պատճառած անձը և վնաս կրած անձը նույն Պայմանավորվող Կողմի քաղաքացիներ են, բայց մշտապես բնակվում են մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում, ապա հարցը լուծվում է այդ Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան:
3. Քաղաքացիական իրավախախտումներից բխող պարտավորությունների վերաբերյալ գործերով իրավասու են այն Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկները, որի տարածքում կատարվել են այդ իրավախախտումները, կամ որի տարածքում մշտապես բնակվում է պատասխանողը: Իրավասության ընտրության իրավունքը պատկանում է հայցվորին:
4. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են, եթե այլ բան չի նախատեսված բազմակողմ միջազգային կոնվենցիաներով, որոնց մասնակից է Պայմանավորվող Կողմերից գոնե մեկը:

Գ Լ ՈՒ Խ 4

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԵՎ Ի ԿԱՏԱՐ ԱԾՈՒՄԸ

Հոդված 51. Ճանաչման և կատարման օբյեկտը

1. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով, իր տարածքում ճանաչում և ի կատար է ածում մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում ընդունված որոշումները:
2. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակների համար, «որոշումներ» տերմինի տակ հասկացվում են՝
  - ա) դատարանների և այլ իրավասու հիմնարկների կողմից քաղաքացիական գործերով ընդունված վճիռները և որոշումները.
  - բ) քրեական գործերով ընդունված դատավճիռները, որոշումները՝ վնասների հատուցման վերաբերյալ.
  - գ) դատական ծախսերի վերաբերյալ որոշումները.
  - դ) միջնորդ դատարանի որոշումները.
  - ե) կողմերի միջև կնքված հաշտության գործարքները, որոնք հաստատված են դատարանի որոշմամբ:

Հոդված 52. Որոշումների ճանաչման և կատարման պայմանները

Որոշումները ճանաչվում և ի կատար են ածվում հետևյալ պայմանների և պահանջների պահպանմամբ.

- ա) եթե դրանք վերջնական են և ենթակա են կատարման այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում դրանք ընդունվել են: Այլմենտների վճարման հետ կապված գործերով ճանաչվում են նաև դրանց վերաբերյալ ընդունված ժամանակավոր որոշումները, եթե դրանք ուժի մեջ են մտել որոշումներն ընդունած իրավասու մարմինների Պայմանավորվող Կողմի տարածքում.
- բ) եթե խախտված չէ այն Պայմանավորվող Կողմի արդարադատության հիմնարկի բացառիկ իրավասությունը, որի տարածքում իրականացվելու է ճանաչումը և ի կատար ածումը.
- գ) եթե այդ որոշմամբ պարտապան ճանաչված անձին, որը չի մասնակցել դատավարությանը, պատշաճ կերպով և ժամանակին դատական ծանուցագիր և հայցադիմում է ուղարկվել այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում ընդունվել է այդ որոշումը, իսկ եթե այդ անձը գրկված է եղել գործունակությունից՝ ապա եթե նրա համար ներկայացուցչության հնարավորություն է ապահովված եղել.
- դ) եթե այն Պայմանավորվող Կողմի տարածքում, որտեղ պետք է ճանաչվի և ի կատար ածվի որոշումը, նույն կողմերի միջև, նույն առարկայի և նույն վեճի վերաբերյալ նախկինում որոշում չի ընդունվել կամ հարուցված գործը չի գտնվում քննարկման ընթացքում.
- ե) եթե սույն Պայմանագրի դրույթներից հետևում է, որ պետք է կիրառվի մյուս Պայմանավորվող Կողմի օրենքը, և ընդունված որոշումից էլ հետևում է, որ հենց այդ Պայմանավորվող Կողմի օրենքն է կիրառվել: Սակայն ճանաչումը չի կարող մերժվել միայն այն պատճառով, որ որոշումն ընդունած դատարանը այլ օրենք է կիրառել, եթե ակնհայտ չէ, որ անձի գործունակության հետ կապված դատական գործով ընդունված որոշումը կտարբերվեր այն որոշումից, որը կընդունվեր կիրառման ենթակա օրենքի հիման վրա.
- զ) եթե այդ որոշման ճանաչումը և ի կատար ածումը վնաս չեն պատճառի այն Պայմանավորվող Կողմի հասարակական կարգին, որի տարածքում այդ որոշումը պետք է ճանաչվի և ի կատար ածվի:

### Հոդված 53. Ճանաչման և կատարման մասին դիմումը

1. Ճանաչման և կատարման ընդունելու մասին դիմումը ներկայացվում է առաջին ատյանի այն դատարանին, որը տվյալ գործով որոշում է ընդունել: Այդ դիմումը պետք է ուղարկվի ճանաչման և ի կատար ածման համար իրավասու դատարանին կամ հիմնարկին: Դիմումը կարող է նաև ներկայացվել անմիջապես իրավասու դատարանին կամ հիմնարկին:
2. Դիմումին կցվում են հետևյալ փաստաթղթերը.
  - ա) որոշման լրիվ տեքստը և տեղեկանք այն մասին, որ այդ որոշումը վերջնական է և կարող է կատարվել, եթե ուժի մեջ մտած լինելու հանգամանքն ուղղակիորեն չի բխում որոշման տեքստից.
  - բ) այն փաստաթղթերի բնօրինակները կամ վավերացված պատճենները, որոնք վկայում են, որ այդ որոշմամբ պարտապան ճանաչված և դատավարությանը չմասնակցած անձը գոնե մեկ անգամ պատշաճ կերպով և ժամանակին դատարան է կանչվել.

զ) դիմումի և սույն կետի (ա) ու (բ) ենթակետերում նշված փաստաթղթերի վավերացված թարգմանությունները:

3. Դատական ծախսերի վերաբերյալ որոշման հարկադիր կատարման մասին դիմումին պետք է կցվեն այդ որոշման վավերացված պատճենը, տեղեկանք այն մասին, որ որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտել, ինչպես նաև նշված փաստաթղթերի վավերացված թարգմանությունը:

4. Փաստացի կատարման մասին դիմումը կարող է ներկայացվել կատարման ընդունելու մասին դիմումի հետ միաժամանակ:

Հոդված 54. Ճանաչման և ի կատար ածման կարգը

1. Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքում իր քաղաքացիների քաղաքացիական կացության վերաբերյալ ընդունված որոշումները ամբողջությամբ ճանաչվում են մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում: Եթե այդպիսի որոշում ընդունվել է երրորդ պետության տարածքում, ապա դա պետք է նախապես ճանաչվի այն պետության կողմից, որի քաղաքացին է հանդիսանում այդ անձը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշվածներից բացի մնացած որոշումները կարող են ճանաչվել, եթե կատարված են սույն Պայմանագրի 51-րդ և 52-րդ հոդվածներով նախատեսված պահանջները:

3. Ընտանեկան գործերով որոշումները կատարման ընդունելու իրավասությունը պատկանում է այն Պայմանավորվող Կողմի դատարաններին, որի տարածքում այդ որոշումները պետք է ի կատար ածվեն:

4. Կատարման ընդունելու, ինչպես նաև հարկադիր կատարման կարգը որոշվում է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում պետք է տեղի ունենա ի կատար ածումը:

5. Եթե որոշմամբ լուծվում են մի քանի հարցեր, որոնք մտցված են մեկ դիմումի մեջ և միացման ենթակա չեն, ապա դրանց ճանաչումը կամ ի կատար ածումը կարող է կատարվել ըստ առանձին հարցերի:

6. Հարկադիր կատարման վերաբերյալ բոլոր առարկությունները պետք է լուծի այն արդարադատության հիմնարկը, որը որոշում է կայացրել ի կատար ածման մասին:

7. Պարտապանը որոշումը ի կատար ածող դատարանին կարող է ներկայացնել միայն այն առարկությունները, որոնք կարող են վկայակոչվել այն Պայմանավորվող Կողմի օրենքին համապատասխան, որի տարածքում ընդունվել է որոշումը:

8. Նախքան հարկադիր կատարման ընդունելու մասին դիմումը բավարարելը, դատարանը՝ անհրաժեշտության դեպքում, կողմերից կարող է պահանջել ներկայացնել գրավոր բացատրություններ կամ լրացնել ի կատար ածման մասին դիմումը:

Դատարանը կարող է նաև լրացուցիչ տեղեկություններ պահանջել այն դատարանից, որը կայացրել է որոշումը:

Հոդված 55. Ճանաչման և ի կատար ածման հետևանքները

Ճանաչման և ի կատար ածման մեկ անգամ ընդունված վերջնական որոշումները ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ հայցվող Պայմանավորվող Կողմի դատարանների կամ մյուս արդարադատության հիմնարկների ընդունած որոշումները:

Հոդված 56. Իրերի փոխանցումը և դրամական փոխադրումները

Մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում բնակվող պարտատիրոջ գույքի, իրերի և դրամի փոխանցումները կատարվում են այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան, որը կատարում է այդպիսի փոխանցումների մասին որոշումները:

Հոդված 57. Ճանաչման և ի կատար ածման ծախսերը

1. Հայցվող արդարադատության հիմնարկի կողմից մյուս Պայմանավորվող Կողմի համապատասխան արդարադատության հիմնարկի կողմից ընդունված որոշման ճանաչման և ի կատար ածման հետ կապված ծախսերի սահմանումն ու գանձումը կատարվում է հայցվող արդարադատության հիմնարկի պետության օրենսդրությանը համապատասխան: Այդ ծախսերը պետք է ներառեն նաև փաստաթղթերի վավերացման և թարգմանության համար կատարված ծախսերը:

2. Այն անձը, որի նկատմամբ իրավասու արդարադատության հիմնարկը որոշում է ընդունել սույն Պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արտոնություններից օգտվելու իրավունք տալու մասին, այդ նույն արտոնություններից օգտվում է մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում որոշման ճանաչման և ի կատար ածման հետ կապված գործողությունների ընթացքում:

Հոդված 58. Դատական ծախսերի մասին որոշման ի կատար ածումը

Եթե դատավարության մասնակից կողմերից մեկը սույն Պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն ազատված է գրավ վճարելուց և վերջնական որոշման համաձայն պարտավոր է մյուս կողմին վճարել դատական ծախսերը, ապա՝ նրա խնդրանքով, մյուս Պայմանավորվող Կողմի իրավասու դատարանը անվճար կատարման է ընդունում այդ ծախսերի գանձման մասին որոշումը:

Հոդված 59. Դիմումին կից փաստաթղթեր

1. Կատարման ընդունելու մասին դիմումին պետք է կցվեն որոշման վավերացված պատճենը, տեղեկանք այն մասին, որ որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտել, ինչպես նաև նշված փաստաթղթերի վավերացված թարգմանությունը:

2. Այդ տեղեկանքների փոխանցման և 1-ին կետում նշված փաստաթղթերի թարգմանության ու վավերացման հետ կապված ծախսերը համարվում են դատական ծախսեր:

3. Դատարանը՝ առանց կողմերին կանչելու, որոշումը ի կատար ածման կընդունի առանց որևէ այլ պահանջների կամ գործողությունների, բացառությամբ այն փաստաթղթերի պահանջման, որոնք հավաստում են որոշումը վերջնական և ուժի մեջ

մտած լինելու մասին: Իրավասու դատարանը նաև ի կատար ածման է ընդունում սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված որոշումը՝ կայացված այն Պայմանավորվող Կողմի իրավասու հիմնարկի կողմից, որի տարածքում այդ ծախսերը կատարվել են:

Հոդված 60. Միջնորդ դատարանի որոշումների ճանաչումը և ի կատար ածումը

Երկու Պայմանավորվող Կողմերը՝ 1958 թ. հունիսի 10-ին Նյու-Յորքում ստորագրված Օտարերկրյա միջնորդ դատարանների որոշումների ճանաչման և ի կատար ածման մասին Կոնվենցիային համապատասխան, կճանաչեն և կկատարեն մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում միջնորդ դատարանների կայացրած որոշումները:

Մ Ա Ս Ե Ր Ր Ո Ր Դ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 1

ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 61. Իրավական օգնության օբյեկտը

1. Քրեական գործերով իրավական օգնությունը, մասնավորապես, ներառում է. դատական և արտադատական փաստաթղթերի փոխանցումը, մեղադրյալներին, ամբաստանյալներին, վկաներին և փորձագետներին հարցաքննելը, փորձաքննությունների, խուզարկությունների կատարումը, իրեղեն ապացույցների փոխանցումը, ինչպես նաև ապացուցման հետ կապված այլ իրավական գործողությունների կատարումը:

2. Քրեական գործերով իրավական օգնությունը տարածվում է նաև.

ա) ազատագրկման ձևով պատժի կատարման, տուգանքի վճարման կամ դատական ծախսերի վճարման վերաբերյալ փաստաթղթերի փոխանցման նկատմամբ.

բ) դատավճռի կատարման հետաձգման կամ պատիժը կրելուց ազատելու հետ կապված գործողությունների նկատմամբ:

Հոդված 62. Իրավական օգնության մասին հանձնարարությունը

Քրեական գործերով իրավական օգնության մասին հանձնարարությունը՝ սույն Պայմանագրի 16-րդ հոդվածում նշված տեղեկություններից և տվյալներից բացի, պետք է ներառի նաև փաստերի համառոտ նկարագրությունը և դրանց իրավական որակավորումը:

Հոդված 63. Հանձնարարությունների կատարումը և կատարման մասին ծանուցումը

Սույն Պայմանագրի 17-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջները հավասարապես տարածվում են նաև քրեական գործերի վրա:

Հոդված 64. Դատավճիռների մասին ծանուցումները և այլ հաղորդումներ

1. Պայմանավորվող Կողմերը պարտավորվում են եռամսյակը մեկ միմյանց ծանուցել յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի դատարանների կողմից մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացիների նկատմամբ կայացված վերջնական դատավճիռների մասին՝ հնարավորության դեպքում ծանուցմանը կցելով դատապարտյալների մատնահետքերը: Առանձին խնդրանքով պետք է ուղարկվի նաև կայացված վերջնական դատավճռի պատճենը:

Սույն կետի դրույթները կիրառվում են նաև հետագա այն փոփոխությունների նկատմամբ, որոնք կարող են տեղի ունենալ՝ վերը հիշատակված դատավճիռների առնչությամբ:

2. Պայմանավորվող Կողմերը փոխադարձ պահանջներով միմյանց ուղարկում են պատժի ի կատար ածման, տուգանքի գանձման կամ դատական ծախսերի վճարման, ինչպես նաև դատավճռի կատարման կասեցման, կատարման հետաձգման, դատապարտյալների պայմանական ազատման կամ պատժի ի կատար ածումը կասեցնելու վերաբերյալ փաստաթղթերը:

Հոդված 65. Դատվածության մասին տեղեկությունները

1. Պայմանավորվող Կողմերից մեկի իրավասու արդարադատության հիմնարկի խնդրանքով, անվճար ուղարկվում են այն անձանց դատվածության մասին տեղեկությունները, որոնք հետապնդվում կամ քրեական գործերով դատի են ենթարկվում մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում:

2. Եթե խնդրանքը ներկայացնում է քաղաքացիական գործերով իրավասու դատարանը կամ վարչական մարմինը, ապա այն պետք է հիմնավորված լինի և ենթակա է քննարկման հայցվող Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 66. Քրեական գործերով իրավական օգնության մերժումը

1. Քրեական գործերով իրավական օգնության մասին հանձնարարությունը կարող է մերժվել, եթե.

ա) օգնությունը հայցվում է այնպիսի արարքների վերաբերյալ, որոնք հայցվող Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համապատասխան դիտվում են որպես քաղաքական հանցագործություններ կամ այդպիսի հանցագործությունների հետ առնչվող հանցագործություններ, կամ էլ զինվորական հանցագործություններ.

բ) հայցվող Պայմանավորվող Կողմը համարում է, որ իրավական օգնության մասին հանձնարարությունը կատարելը վնաս կհասցնի իր ինքնիշխանությանը, անվտանգությանը կամ հասարակական կարգին.

գ) արարքը կամ արարքները, որոնց վերաբերյալ իրավական օգնություն է հայցվում, հայցվող Պայմանավորվող Կողմի օրենսդրության համաձայն հանցագործություն չեն համարվում:

2. Հայցվող Պայմանավորվող Կողմը հայցող Պայմանավորվող Կողմին պետք է հայտնի իրավական օգնություն ցույց տալու մերժման պատճառները:

Հոդված 67. Հաղորդակցման եղանակը

Քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերով Պայմանավորվող Կողմերի արդարադատության հիմնարկները միմյանց միջև հաղորդակցվում են՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ գլխավոր դատախազի միջոցով, և Ռուսիայի կողմից՝ Գերագույն դատարանին կից գլխավոր դատախազության:

Գ Լ ՈՒ Խ 2

ՀԱՆՁՆՈՒՄ

Հոդված 68. Հանձնման պարտականությունը

1. Պայմանավորվող Կողմերը պարտավորվում են մյուս Պայմանավորվող Կողմի պահանջով և սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան, միմյանց հանձնել իրենց տարածքում գտնվող անձանց՝ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու նպատակով:
2. Հանձնումը թույլատրվում է միայն այն արարքների համար, որոնք հանցագործություն են համարվում երկու Պայմանավորվող Կողմերի օրենսդրությանը համապատասխան:
3. Երկու Պայմանավորվող Կողմերի օրենսդրության համաձայն արարքը հանցագործություն համարելը չպետք է պայմանավորվի Պայմանավորվող Կողմերի օրենսդրությամբ այդ արարքը հանցագործությունների նույն խմբի մեջ մտցված լինելու կամ այն նույն տերմինով անվանելու հանգամանքով:
4. Քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնումը թույլատրվում է միայն այն արարքներով, որոնց համար երկու Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ նախատեսված է ազատազրկում՝ 2 տարուց ոչ պակաս ժամանակով, կամ ավելի ծանր պատիժ, իսկ դատավճիռի ի կատար ածելու համար հանձնումը կատարվում է, եթե նշանակվել է 1 տարուց ավելի ժամանակով ազատազրկում կամ ավելի ծանր պատիժ:
5. Եթե հանձնման մասին պահանջը վերաբերվում է երկու կամ ավելի հանցագործություններին, որոնք երկու Պայմանավորվող Կողմերի օրենսդրությամբ պատժվում են ազատազրկմամբ կամ ազատության այլ սահմանափակմամբ, բայց դրանցից միայն մեկն է համապատասխանում պատժի ժամկետի վերաբերյալ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված պահանջներին, ապա հանձնումը թույլատրվում է նաև մյուս հանցագործությունների համար:

Հոդված 69. Հանձնման մերժումը

1. Պայմանավորվող Կողմերը հանձնումը մերժում են, եթե անձը, որի հանձնման պահանջ է ներկայացվել, հանդիսանում է հայցվող Պայմանավորվող Կողմի քաղաքացի:



Անձի քաղաքացիությունը որոշվում է հանձնման մասին որոշման ընդունման պահի դրությամբ:

2. Հանձնման մասին պահանջը մերժվում է նաև, եթե.

ա) հանցագործությունը կատարվել է հայցվող Պայմանավորվող Կողմի տարածքում.

բ) հանցագործությունը կատարվել է հայցող Պայմանավորվող Կողմի տարածքից դուրս, և հայցվող Պայմանավորվող Կողմի օրենքն արգելում է քրեական հետապնդում իրականացնել իր տարածքից դուրս կատարված հանցագործությունների համար կամ հանձնում կատարել հանձնման մասին պահանջի հիմք հանդիսացող հանցագործության համար.

գ) Պայմանավորվող Կողմերից մեկի օրենսդրության համաձայն՝ անձին, որի հանձնումը պահանջվում է, հայցվող հանցագործության համար ներում է շնորհվել, կամ էլ այդ արարքի համար քրեական հետապնդում չի կարող իրականացվել՝ վաղեմության ժամկետն անցնելու կամ այլ օրինական հիմքով.

դ) անձի նկատմամբ, որի հանձնումը պահանջվում է, հայցվող Պայմանավորվող Կողմի տարածքում հանձնման պահանջի հիմք հանդիսացող նույն արարքի համար արդեն քրեական հետապնդում է իրականացվել, նա դատապարտվել է կամ քրեական գործը կարճելու մասին որոշում է ընդունվել.

ե) երկու Պայմանավորվող Կողմերի օրենսդրության համաձայն, քրեական գործ կարող է հարուցվել միայն տուժողի դիմումի հիման վրա:

3. Հանձնում չի իրականացվում, եթե այն հանցագործությունը, որի կապակցությամբ հանձնում է հայցվում, հայցվող Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ դիտվում է որպես քաղաքական հանցագործություն կամ այդպիսի հանցագործության հետ առնչվող հանցագործություն:

4. Սույն հոդվածի 3-րդ կետի դրույթը կիրառվում է նաև այն դեպքում, եթե հայցվող Պայմանավորվող Կողմը հիմնավոր պատճառ ունի ենթադրելու, որ հայցող Պայմանավորվող Կողմի ընդհանուր օրենքը խախտող հանցագործության կատարման պատճառաբանությամբ հանձնման մասին պահանջը ներկայացվել է ռասայի, կրոնի, ազգության կամ քաղաքական համոզմունքների համար անձին հետապնդելու կամ պատժելու նպատակով, կամ եթե առկա է վերը նշված պատճառներով անձի վիճակի վատթարացման վտանգը:

5. Հանձնում չի թույլատրվում նաև այնպիսի զինվորական հանցագործությունների համար, որոնք չեն համարվում ընդհանուր օրենքը խախտող հանցագործություններ:

#### Հոդված 70. Ֆինանսական հանցագործությունների համար հանձնումը

1. Հարկերի, տուրքերի, մաքսերի և տարադրամի փոխանակման հետ կապված քրեական գործերով հանձնումը թույլատրվում է միայն եթե այդ գործերով արարքները իրենց բնույթով համապատասխանում են հայցող Պայմանավորվող Կողմի օրենքով նախատեսված նույնաբնույթ հանցագործություններին:

2. Հանձնումը չի կարող մերժվել այն պատճառաբանությամբ, որ հայցվող Պայմանավորվող Կողմի օրենսդրությունը չի սահմանում տուրքերի կամ հարկերի նույնպիսի տեսակներ կամ հարկերի, տուրքերի, մաքսերի և տարադրամի

փոխանակման վերաբերյալ նույնպիսի կանոններ, ինչպիսիք սահմանված են հայցող Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ:

Հոդված 71. Հանձնումը մահապատիժ նախատեսող գործերով

Եթե այն հանցագործության կապակցությամբ, որի համար հանձնում է հայցվում, հայցող Պայմանավորվող Կողմի օրենսդրության համաձայն կարող է նշանակվել մահապատիժ, և այդպիսի պատիժ նախատեսված չէ հայցվող Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, ապա հանձնում չի թույլատրվում, եթե հայցող Պայմանավորվող Կողմը հայցվող Պայմանավորվող Կողմի համար բավարար հավաստիք չներկայացնի առ այն, որ մահապատիժ չի իրականացվի:

Հոդված 72. Հանձնման մասին պահանջին կից փաստաթղթերը

Հանձնման մասին պահանջին պետք է կցված լինեն հետևյալ փաստաթղթերը.

ա) կալանքի վերցնելու մասին որոշման իսկականը կամ վավերացված պատճենը կամ հայցող Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված նույն իրավաբանական ուժն ունեցող այլ փաստաթուղթ, իսկ պատժի կատարման համար հանձնման մասին պահանջին՝ վերջնական դատավճռի իսկականը կամ դրա վավերացված պատճենը.

բ) այն փաստերի նկարագրությունը, որոնց համար հայցվում է հանձնումը, հանցագործության կատարման վայրը և ժամանակը, ինչպես նաև արդեն նշանակված պատժի ի կատար ածված մասի ժամկետի տևողությունը: Եթե հանցագործությամբ նյութական վնաս է հասցվել, ապա պետք է նշվի նաև դրա ճշգրտված չափը՝ ներառյալ դրա մի մասի գանձման վերաբերյալ տվյալները, եթե այդպիսի գանձում կատարվել է.

գ) հայցվող գործի նկատմամբ կիրառման ենթակա՝ հայցող Պայմանավորվող Կողմի օրենքի տեքստի պատճենը.

դ) հնարավորության դեպքում՝ այն անձի մասին տվյալները, որի հանձնումը հայցվում է. անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության կամ գտնվելու վայրը, ինչպես նաև նրա արտաքին հատկանիշների նկարագրությունը, լուսանկարները և մատնահետքերը:

Հոդված 73. Լրացուցիչ տվյալներ

1. Եթե հայցող Պայմանավորվող Կողմից ստացված տվյալները բավարար չեն հանձնման մասին պահանջը քննության առնելու համար, ապա հայցվող Պայմանավորվող Կողմը կարող է պահանջել լրացուցիչ տվյալներ: Լրացուցիչ տվյալների ուղարկման համար հայցվող Պայմանավորվող Կողմը կարող է սահմանել ժամկետ, որը երկու ամսից չպետք է գերազանցի: Հայցող Պայմանավորվող Կողմի հիմնավորված խնդրանքով, այդ ժամկետը կարող է երկարացվել ևս 15 օրով:

2. Եթե հանձնման մասին պահանջում նշված անձը կալանքի է վերցվել և հայցող Պայմանավորվող Կողմը սահմանված ժամկետում լրացուցիչ տվյալներ չի ուղարկել,

ապա հանձնման մասին պահանջ ստացած Պայմանավորվող Կողմը կարող է այդ անձին ազատ արձակել:

Հոդված 74. Հանձնման նպատակով կալանքի վերցնելը

Հանձնման մասին պահանջն ստանալուն պես հայցվող Պայմանավորվող Կողմը պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի այն անձին կալանքի վերցնելու համար, որի հանձնումը հայցվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Պայմանագրին համապատասխան հանձնում չի կարող տեղի ունենալ:

Հոդված 75. Ժամանակավորապես կալանքի վերցնելը

1. Անհետաձգելի դեպքերում, անձին կալանքի տակ վերցնելը կարող է կատարվել մինչև հանձնման մասին պահանջն ստանալը, եթե այդ մասին խնդրել է հայցող Պայմանավորվող Կողմը: Խնդրանքում պետք է մատնանշվի ժամանակավոր կալանավորման մասին որոշումը կամ տվյալ անձի նկատմամբ կայացված վերջնական դատավճիռը, և որ հանձնման մասին պահանջը կներկայացվի ավելի ուշ:

Ժամանակավոր կալանավորման մասին խնդրանքը կարող է ուղարկվել փոստով, հեռագրով, տելեքսով կամ ֆաքսով՝ Պայմանավորվող Կողմի Ինտերպոլի ազգային գործակալության միջոցով, կամ որևէ այլ միջոցով, որն ընդունելի է ժամանակավոր կալանավորման մասին խնդրանքն ստացող Պայմանավորվող Կողմի համար:

Հայցող Պայմանավորվող Կողմը անհապաղ պետք է տեղեկացվի սույն կետով նախատեսված խնդրանքի քննարկման արդյունքների մասին:

2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով կալանքի վերցված անձը կարող է ազատ արձակվել, եթե նրան կալանքի վերցնելու խնդրանքից հետո մեկ ամսվա ընթացքում հանձնման մասին պահանջ չի ստացվել: Հայցող Պայմանավորվող Կողմի հիմնավորված խնդրանքով, այդ ժամկետը կարող է երկարացվել ևս 15 օրով: Սակայն ժամանակավորապես ազատ արձակելը հնարավոր է ցանկացած ժամանակ՝ պայմանով, որ հայցվող Պայմանավորվող Կողմը ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները տվյալ անձի փախուստը կանխելու համար:

3. Ազատ արձակելը չի խոչընդոտում նոր կալանավորմանը և հանձնմանը՝ հետագայում հանձնման մասին պահանջը ստանալու դեպքում:

Հոդված 76. Հանձնման հետաձգումը

Եթե անձի նկատմամբ, որի հանձնումը պահանջվում է, հայցվող Պայմանավորվող Կողմի տարածքում այլ գործ է քննվում կամ նա նույն տարածքում դատապարտվել է այլ հանցագործության համար, քան որի կապակցությամբ պահանջվում է հանձնումը, ապա նրա հանձնումը կարող է հետաձգվել մինչև հարուցված քրեական գործի ավարտը, դատարանի կողմից նշանակված պատժի լրիվ կրումը, կամ նշանակված պատիժը կրելուց վաղակես ազատումը:

Հոդված 77. Ժամանակավոր հանձնումը

1. Եթե սույն Պայմանագրի 75-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հանձնման հետաձգումը կարող է քրեական հետապնդման վաղեմության ժամկետի անցում առաջացնել կամ վնաս հասցնել հանձնման պահանջի հիմք հանդիսացող արարքի հանգամանքների պարզմանը, ապա հայցող Պայմանավորվող Կողմի հիմնավորված պահանջի հիման վրա, անձը, որի հանձնումը հայցվում է, կարող է հանձնվել ժամանակավորապես: Ժամանակավոր հանձնումը կատարվում է Պայմանավորվող Կողմերի միջև փոխհամաձայնեցված ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ժամանակավորապես հանձնված անձը պետք է անմիջապես վերադարձվի այն վարույթի ավարտից հետո, որի համար նա հանձնվել է, բայց ոչ ուշ, քան Պայմանավորվող Կողմերի միջև փոխհամաձայնեցված ժամկետից:

#### Հոդված 78. Փոխանցումը

1. Հայցվող Պայմանավորվող Կողմը հայցող Պայմանավորվող Կողմին պետք է տեղեկացնի վերջինիս կողմից ներկայացված հանձնման պահանջի վերաբերյալ իր որոշման մասին:

2. Համաձայնվելու դեպքում, հայցվող Պայմանավորվող Կողմը հայցող Պայմանավորվող Կողմին տեղեկացնում է հանձնման ենթակա անձի փոխանցման վայրի և ժամանակի մասին, ինչպես նաև հանձնման նպատակով այդ անձին կալանքի տակ պահելու տևողության մասին:

3. Եթե հայցող Պայմանավորվող Կողմը նշանակված օրը պահանջվող անձին չի ընդունում առանց հետաձգման մասին դիմում ներկայացնելու, ապա այդ անձը փոխանցման համար նշանակված օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում պետք է ազատ արձակվի, և հայցվող Պայմանավորվող Կողմը կարող է հետագայում մերժել նույն արարքի համար նրա հանձնումը:

#### Հոդված 79. Առարկաների փոխանցումը

1. Պայմանավորվող Կողմերը պարտավորվում են ըստ խնդրանքի միմյանց փոխանցել.  
ա) կատարված հանցագործությամբ հանցագործի կողմից ձեռք բերված իրերը և նյութական արժեքները.

բ) այն իրերը, որոնք ապացուցողական նշանակություն ունեն այն քրեական վարույթում, որի առիթով պահանջվում է հանձնումը:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված իրերը և նյութական արժեքները պետք է փոխանցվեն, եթե նույնիսկ հանձնման ենթակա անձի հանձնումը չի կարող իրականացվել նրա մահվան, հետապնդումից թաքնվելու կամ այլ պատճառներով:

3. Եթե պահանջվող իրերը հայցվող Պայմանավորվող Կողմին որպես ապացույցներ անհրաժեշտ են այլ քրեական գործով, ապա դրանց փոխանցումը կարող է հետաձգվել մինչև այդ գործի ավարտը, կամ դրանք կարող են փոխանցվել վերադարձման պայմանով:

4. Փոխանցված իրերի նկատմամբ հայցվող Պայմանավորվող Կողմի կամ երրորդ անձանց իրավունքները պահպանվում են: Այդ իրերը գործի ավարտից հետո հնարավորին չափ շուտ և անվճար պետք է վերադարձվեն հայցվող Պայմանավորվող Կողմին:

Հոդված 80. Կրկնակի հանձնում

Եթե հանձնված անձը խուսափում է քրեական հետապնդումից, դատավարությունից կամ պատիժը կրելուց, և կամավոր վերադառնում է հայցվող Պայմանավորվող Կողմի տարածք, ապա նա կարող է կրկին հանձնվել՝ առանց սույն Պայմանագրի 72-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի ներկայացման պահանջի:

Հոդված 81. Հանձնման մասին մի քանի պետություններից ստացված պահանջները

Եթե հանձնման մասին պահանջը ստացվում է միաժամանակ մի քանի պետությունների կողմից՝ միևնույն արարքի կամ տարբեր արարքների համար, ապա հայցվող Պայմանավորվող Կողմն ինքն է որոշում, թե այդ պահանջներից որ մեկը պետք է բավարարի՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները, մասնավորապես, հանցագործության վտանգավորության աստիճանը և կատարման վայրը, համապատասխան պահանջների ներկայացման ժամանակը, հանձնման ենթակա անձի քաղաքացիությունը, ինչպես նաև այլ պետությանը այդ անձի հանձնման հնարավորությունները:

Հոդված 82. Հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները

1. Հանձնված անձը չի կարող քրեական հետապնդման ենթարկվել, դատապարտվել կամ պատիժն ի կատար ածելու համար կալանավորվել, կամ ենթարկվել իր անձնական ազատության այլ սահմանափակումների՝ նախքան հանձնելը կատարված մեկ այլ հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել, բացառությամբ, եթե. ա) նրան հանձնած Պայմանավորվող Կողմը համաձայն է այդպիսի միջոցների կիրառմանը: Այդ նպատակով նշված Պայմանավորվող Կողմին պետք է ներկայացվի դիմում՝ սույն Պայմանագրի 72-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի, ինչպես նաև հանձնված անձի կարծիքը պարունակող իրավասու դատական մարմնի կողմից կազմված պաշտոնական հաղորդման հետ միասին: Այդպիսի համաձայնություն կարող է տրվել, եթե արարքը, որի համար նա պահանջվում է, հանձնման պարտավորություն է առաջացնում.

բ) չնայած ընձեռված հնարավորությանը, հանձնված անձը չի հեռացել հայցող Պայմանավորվող Կողմի տարածքից քրեական վարույթի ավարտից կամ, դատապարտվելու դեպքում՝ պատիժը ի կատար ածվելուց հետո 30 օրվա ընթացքում, կամ էլ կրկին վերադարձել է նրա տարածք: Այդ ժամկետի մեջ չի մտնում այն ժամանակը, որի ընթացքում հանձնված անձը հայցող Պայմանավորվող Կողմի տարածքից չի կարողացել հեռանալ իր կամքից անկախ պատճառներով:

2. Հանձնված անձի նկատմամբ սկսված վարույթի ընթացքում հանցագործության որակումը փոփոխվելու դեպքում այդ անձը չի կարող հետապնդվել կամ դատապարտվել, բացառությամբ միայն այնչափով, որչափով որ` ըստ նոր որակավորման, նախատեսված արարքը հանձնում է թույլ տալիս:

Հոդված 83. Երրորդ պետություններին հանձնելը

Բացառությամբ սույն Պայմանագրի 82-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետով նախատեսված դեպքերի, հայցող Պայմանավորվող Կողմը` առանց հայցվող Պայմանավորվող Կողմի համաձայնության, չի կարող իրեն հանձնված անձին հանձնել երրորդ պետությանը, որը նրան պահանջում է այն արարքների կապակցությամբ, որոնք կատարվել են մինչև նրա հանձնումը: Հայցվող Պայմանավորվող Կողմը կարող է պահանջել իրեն տրամադրել սույն Պայմանագրի 72-րդ հոդվածում հիշատակված փաստաթղթերը:

Հոդված 84. Քրեական գործի արդյունքների մասին տեղեկատվությունը

Պայմանավորվող Կողմերը միմյանց տեղեկացնում են հանձնված անձի նկատմամբ հարուցված քրեական գործի արդյունքների մասին: Եթե այդ անձի նկատմամբ վերջնական որոշում է կայացվել, ապա պետք է ուղարկվի դրա վավերացված պատճենը:

Հոդված 85. Տարանցում

1. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը մյուս Պայմանավորվող Կողմի խնդրանքով, թույլատրում է իր տարածքով տարանցիկ փոխադրումը այն անձանց, որոնք այդ Պայմանավորվող Կողմին են հանձնվել երրորդ պետության կողմից: Սույն կետի դրույթը չի կիրառվում այն դեպքերում, եթե սույն Պայմանագրի համաձայն հանձնման պարտավորություն չի առաջանում:

2. Տարանցիկ փոխադրում թույլատրելու մասին դիմումը ներկայացվում և քննարկվում է նույն կարգով, ինչ հանձնման մասին պահանջը:

Հոդված 86. Հանձնման և տարանցման ծախսերը

1. Հանձնման հետ կապված ծախսերը կրում է այն Պայմանավորվող Կողմը, որի տարածքում դրանք առաջացել են:

2. Տարանցիկ փոխադրման հետ կապված ծախսերը կրում է այն Պայմանավորվող Կողմը, որը պահանջել է այդ փոխադրումը:

Հոդված 87. Հաղորդակցման եղանակը

Հանձնման հարցերով Պայմանավորվող Կողմերի միջև հաղորդակցումն իրականացվում է հետևյալ կարգով.

ա) եթե հանձնումը պահանջվում է քրեական գործը քննելու նպատակով` սույն Պայմանագրի 67-րդ կետում նշված մարմինների միջոցով.

բ) եթե հանձնումը պահանջվում է անձին դատի տալու նպատակով՝ արդարադատության նախարարությունների միջոցով.

գ) եթե հանձնումը պահանջվում է պատիժն ի կատար ածելու նպատակով, ինչպես նաև տարանցման հարցերով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Ռուսիայի արդարադատության նախարարության միջոցով:

Գ Լ ՈՒ Խ 3

#### ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Հոդված 88. Քրեական գործ հարուցելու պարտականությունը

1. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը՝ մյուս Պայմանավորվող Կողմի պահանջով, իր տարածքում գործող օրենսդրությանը համապատասխան, քրեական գործ է հարուցում իր քաղաքացիների նկատմամբ, եթե բավարար տվյալներ կան առ այն, որ վերջիններս մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում կատարել են սույն Պայմանագրի համաձայն հանձնման ենթակա հանցագործություն:

2. Քրեական գործ հարուցելու մասին պահանջը քննության է առնվում միայն եթե արարքը համապատասխանում է սույն Պայմանագրի 68-րդ հոդվածի 2-րդ կետով և 69-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված պայմաններին:

Հոդված 89. Պահանջին կից փաստաթղթերը

Սույն Պայմանագրի 88-րդ կետում հիշատակված պահանջին պետք է կցված լինի կատարված արարքի համառոտ նկարագրությունը և դրա իրավական որակավորումը պարունակող տեղեկանք, ինչպես նաև հանցագործության վերաբերյալ առկա ապացույցները և, հնարավորության դեպքում, սույն Պայմանագրի 72-րդ հոդվածով նախատեսված տվյալները:

Հոդված 90. Արդյունքների մասին տեղեկացնելը և հաղորդակցման եղանակը

1. Հայցող Պայմանավորվող Կողմը հայցվող Պայմանավորվող Կողմին պետք է տեղեկացնի պահանջի վերաբերյալ ընդունված որոշման և քրեական գործի վարույթի արդյունքների մասին: Եթե վերջնական որոշում է ընդունվում, ապա պետք է ուղարկվի նաև այդ որոշման պատճենը:

2. Քրեական գործերի վարույթի փոխանցման հարցերով Պայմանավորվող Կողմերի արդարադատության հիմնարկները միմյանց միջև հաղորդակցվում են սույն Պայմանագրի 67-րդ հոդվածով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 4

#### ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Հոդված 91. Ընդհանուր դրույթներ

1. Պայմանավորվող Կողմերը պարտավորվում են սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան միմյանց իրավական օգնություն ցույց տալ դատապարտված անձանց փոխանցման հարցերով:
2. Սույն Պայմանագրով նախատեսված պայմաններով, Պայմանավորվող Կողմերից որևէ մեկի տարածքում դատապարտված անձը կարող է մյուս Պայմանավորվող Կողմի տարածք փոխանցվել այն պատժի ի կատար ածման համար, ըստ որի նա ազատազրկման է դատապարտվել:
3. Փոխանցումը կարող է հայցվել՝
  - ա) Պայմանավորվող Կողմերից մեկի կողմից.
  - բ) դատապարտված անձի կողմից, որը կարող է իր խնդրանքն ուղղել Պայմանավորվող Կողմերից որևէ մեկին:
4. Սույն Պայմանագրի նպատակների համար.
  - ա) «դատապարտման պետություն» տերմինի տակ հասկացվում է այն Պայմանավորվող Կողմը, որի տարածքում փոխանցվող անձը դատապարտվել է.
  - բ) «ի կատար ածման պետություն» տերմինի տակ հասկացվում է այն Պայմանավորվող Կողմը, որի տարածք է փոխանցվում դատապարտված անձը պատիժը կրելու նպատակով:

#### Հոդված 92. Փոխանցման պայմանները

Փոխանցումն իրականացվում է, եթե.

- ա) դատապարտված անձը ի կատար ածման պետության քաղաքացի է.
- բ) դատավճիռը վերջնական է և օրինական ուժի մեջ է մտել.
- գ) ազատազրկման ձևով պատժի տևողությունը, որը դատապարտված անձին մնացել է կրելու փոխանցման մասին պահանջի ներկայացման պահի դրությամբ, առնվազն 6 ամիս է: Բացառիկ դեպքերում, Պայմանավորվող Կողմերը կարող են փոխանցում իրականացնելու շուրջ համաձայնության գալ նաև, եթե ի կատար ածելու համար մնացած պատժի տևողությունը 6 ամսից պակաս է.
- դ) դատապարտված անձը, իսկ տարիքի, առողջական կամ հոգեկան վիճակի, ինչպես նաև Պայմանավորվող Կողմերի կողմից անհրաժեշտ համարվող մյուս հանգամանքների առկայության դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը համաձայն է այդպիսի փոխանցմանը.
- ե) արարքը, որի համար կայացված է դատավճիռը, հանցագործություն է համարվում ի կատար ածման պետության օրենսդրությամբ.
- զ) Պայմանավորվող Կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել փոխանցման վերաբերյալ:

#### Հոդված 93. Տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը

1. Դատապարտման պետության իրավասու մարմինները մյուս Պայմանավորվող Կողմի քաղաքացի հանդիսացող յուրաքանչյուր դատապարտված անձին պետք է տեղեկացնեն սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան պատժի կատարման նպատակով



այն Պայմանավորվող Կողմին փոխանցելու հնարավորության մասին, որի քաղաքացի է ինքը հանդիսանում:

2. Եթե դատապարտված անձը դատապարտման պետությունում իր փոխանցման վերաբերյալ համաձայնություն է հայտնում, ապա այդ պետությունը դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում այդ մասին տեղեկացնում է ի կատար ածման պետությանը:

3. Տեղեկատվության մեջ պետք է նշվի.

ա) դատապարտված անձի անունը և ազգանունը, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, ծննդյան վայրը.

բ) եթե հնարավոր է, ի կատար ածման պետության տարածքում նրա հասցեն.

գ) դատավճիռը հիմնավորող արարքների նկարագրությունը.

դ) պատժի տեսակը, պատժի կրած մասի տևողությունը և պատիժն ի կատար ածելու տարին, ամիսը և ամսաթիվը:

4. Եթե դատապարտված անձը դատապարտման պետության տարածքում ցանկություն է հայտնում իր փոխանցման վերաբերյալ, ապա այդ պետությունը ի կատար ածման պետությանը վերջինիս խնդրանքով ուղարկում է սույն հոդվածի 3-րդ կետում նշված տեղեկատվությունը:

5. Դատապարտված անձը պետք է գրավոր տեղեկացվի երկու պետություններից յուրաքանչյուրի կողմից փոխանցման պահանջի վերաբերյալ ընդունված բոլոր որոշումների մասին:

#### Հոդված 94. Փոխանցման մասին պահանջը և դրան կից փաստաթղթերը

1. Փոխանցման մասին պահանջը պետք է լինի գրավոր, որին պետք է կցված լինեն.

ա) փաստաթուղթ այն մասին, որ դատապարտված անձը ի կատար ածման պետության քաղաքացի է.

բ) այն օրենքի տեքստի պատճենը, որից հետևում է, որ ի կատար ածման պետության օրենսդրության համաձայն, փոխանցման ենթակա անձի կողմից կատարված այն գործողությունները, որոնք հանգեցրել են դատավճռի կայացմանը, հանցագործություն են համարվում և պատժվում են ազատազրկմամբ կամ տուգանքով.

գ) դատավճռի վավերացված պատճենը՝ նշումով, որ այն վերջնական է, ինչպես նաև սլյալ գործով արարքի նկատմամբ կիրառվող օրենքի տեքստի պատճենը.

դ) պատժի կրած մասի, կալանքի տակ գտնվելու տևողության, ինչպես նաև պատժի ի կատար ածելու համար մնացած ժամկետի մասին փաստաթղթերը.

ե) փոխանցմանը համաձայն լինելու մասին գրավոր հայտարարությունը.

զ) այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ է համարում ուղարկել դատապարտման պետության իրավասու մարմինը.

է) փոխանցման մասին պահանջի և կից փաստաթղթերի պաշտոնական թարգմանությունը:

3. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը՝ անհրաժեշտության դեպքում, կարող է պահանջել այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

#### Հոդված 95. Փոխանցման համաձայնությունը

1. Դատապարտված անձը մյուս Պայմանավորվող Կողմի տարածք փոխանցման մասին համաձայնությունը տալիս է իր կամքն ազատ արտահայտելու միջոցով՝ իրազեկ լինելով դրա իրավական հետևանքների մասին: Համաձայնության արտահայտման կարգը որոշվում է դատապարտման պետության օրենսդրությամբ:

2. Դատապարտման պետությունը ի կատար ածման պետությանը պետք է հնարավորություն ընձեռի ստուգելու, թե արդյոք փոխանցման համաձայնությունը տրվել է սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմաններին համապատասխան: Այդպիսի ստուգումը կատարվում է ի կատար ածման պետության՝ դատապարտման պետության տարածքում գտնվող դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի իրավասու պաշտոնյայի միջոցով:

Հոդված 96. Հաղորդակցման եղանակը

Դատապարտված անձանց փոխանցման հարցերով Պայմանավորվող Կողմերի արդարադատության հիմնարկները հաղորդակցվում են՝ Ռուսիայի կողմից՝ արդարադատության նախարարության, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից՝ ներքին գործերի նախարարության միջոցով:

Հոդված 97. Դիմումի քննարկման արդյունքների մասին տեղեկացնելը

Հայցվող Պայմանավորվող Կողմը հայցող Պայմանավորվող Կողմին հնարավորին չափ սեղմ ժամկետում գրավոր տեղեկացնում է հայցվող փոխանցման թույլատրման կամ մերժման մասին:

Հոդված 98. Դատապարտված անձանց հանձնումը

Փոխանցման մասին պահանջը բավարարելու դեպքում, Պայմանավորվող Կողմերի իրավասու արդարադատության հիմնարկները փոխհամաձայնեցված կարգով որոշում են դատապարտյալի փոխանցման վայրը, ժամանակը և փոխանցման ձևը:

Հոդված 99. Պատժի կատարումը

1. Պատժը պետք է կատարվի դատապարտման պետության իրավասու դատարանի կողմից կայացված դատավճռի հիման վրա: Սակայն ի կատար ածման պետության իրավասու դատարանն է որոշում այդպիսի դատավճռի կատարման եղանակը:

2. Եթե դատապարտման պետության կիրառած պատժի բնույթը և տևողությունը չեն համապատասխանում ի կատար ածման պետության օրենսդրությանը, ապա վերջին պետության իրավասու դատարանի որոշմամբ այն կարող է համապատասխանեցվել իր օրենսդրությամբ նույն բնույթի հանցագործությունների համար նախատեսված պատժին: Այդ նշանակված պատժը պետք է հնարավորին չափ համարժեք լինի դատավճռով նշանակված պատժին, իր բնույթով կամ տևողությամբ չպետք է ծանրացնի դատապարտման պետության իրավասու դատարանի կողմից նշանակված պատժը, և

ոչ էլ գերազանցի ի կատար ածման պետության օրենքով սահմանված առավելագույն չափը:

3. Այն պատժամասը, որը դատապարտյալն արդեն կրել է դատապարտման պետության տարածքում, պետք է հանվի սույն հոդվածի 2-րդ կետում հիշատակված դատարանի նշանակած պատժաչափից, եթե պատժատեսակները նույն բնույթի են: Եթե ի կատար ածման պետության դատարանը այլ տեսակի պատիժ է նշանակում, քան դատապարտման պետության դատարանի նշանակած պատիժը, ապա պատժի տեսակը և ժամկետը որոշելիս պետք է հաշվի առնվի պատժի արդեն իսկ կրած մասը:

4. Դատապարտման պետության իրավասու դատարանի կողմից նշանակված լրացուցիչ պատիժը կիրառվում է, եթե դա նախատեսված է այն Պայմանավորվող Կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է հանդիսանում դատապարտված անձը, և եթե այն կատարված չի եղել դատապարտման պետության տարածքում:

5. Պայմանավորվող Կողմի դատարանի կողմից իր քաղաքացու վերաբերյալ ընդունված դատավճռի պատճենը պետք է ուղարկվի մյուս Պայմանավորվող Կողմի իրավասու արդարադատության հիմնարկին:

Հոդված 100. Կիրառվող օրենքը

1. Պատժի կատարումն իրականացվում է ի կատար ածման պետության օրենքներին համապատասխան, որն էլ իրավասու է այդ հարցերով ընդունել որոշումներ:

2. Դատապարտման պետությունը իրավասու է քննության առնել վճռաբեկ գանգատները և որոշում ընդունել դատավճիռը ուժի մեջ թողնելու կամ մասամբ կամ ամբողջությամբ բեկանելու վերաբերյալ:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմը՝ իր օրենսդրությանը համապատասխան, կարող է պատիժը կրելու նպատակով փոխանցված դատապարտյալներին ներում շնորհել, ամնիստիա հայտարարել կամ մեղմացնել պատիժը:

Հոդված 101. Պատժի կատարման վերացումը

Դատապարտման պետությունը ի կատար ածման պետությանը պետք է տեղեկացնի ցանկացած այնպիսի որոշման կամ ակտի մասին, որի կիրառման դեպքում վերանում է պատժի կատարումը: Նման դեպքում ի կատար ածման պետությունը պետք է դադարեցնի պատժի կատարումը:

Հոդված 102. Պատժի կատարման մասին տեղեկատվությունը

Ի կատար ածման պետությունը դատապարտման պետությանը պետք է տեղեկացնի պատժի կատարման մասին, եթե.

ա) պատժի կատարումն ավարտված է.

բ) դատապարտյալը ազատագրկման վայրից փախել է մինչև պատժի կատարման ավարտը.

զ) դատապարտման պետությունը հատուկ տեղեկատվություն է պահանջում կատարման ընթացքի մասին:

#### Հոդված 103. Տարանցում

1. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը թույլատրում է մյուս Պայմանավորվող Կողմի այն քաղաքացիների՝ իր տարածքով տարանցիկ փոխադրումը, որոնք պատժի կատարման նպատակով երրորդ պետության կողմից փոխանցվում են այն պետությանը, որի քաղաքացի են հանդիսանում:
2. Տարանցում թույլատրելու մասին խնդրանքը պետք է ներկայացվի և քննարկվի սույն Պայմանագրի այն դրույթներին համապատասխան, որոնք վերաբերվում են դատապարտված անձանց՝ պատժի կատարման նպատակով փոխադրմանը:

#### Հոդված 104. Փոխանցման ծախսերը

Դատապարտված անձանց փոխադրման հետ կապված ծախսերը կրում է ի կատար ածման պետությունը, բացառությամբ այն ծախսերի, որոնք կատարվել են բացառապես դատապարտման պետության տարածքում:

Մ Ա Ս Չ Ո Ր Ր Ո Ր Դ

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 105. Վեճերի լուծումը

Սույն Պայմանագրի կատարման ընթացքում ծագած բոլոր վեճերը լուծվում են դիվանագիտական ճանապարհով:

#### Հոդված 106. Պայմանագրի վավերացումը և ուժի մեջ մտնելը

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման օրվանից սկսած երեսուներորդ օրը:

#### Հոդված 107. Պայմանագրի գործողությունը

Սույն Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը կարող է նրա գործողությունը դադարեցնել՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Պայմանավորվող Կողմին: Պայմանագրի գործողությունը դադարեցվում է գործողության դադարեցման մասին որոշումը մյուս Պայմանավորվող Կողմին հայտնելու օրվանից սկսած մեկ տարի անցնելուց հետո:

Կատարված է Երևան, 1996 թվականի մարտի 25-ին, երկու բնօրինակից՝ հայերեն, ռումիներեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ տարաձայնություններ առաջանալու դեպքում հիմք է ընդունվում անգլերեն լեզվով տեքստը:

Ի վկայություն վերոշարադրյալի, Պայմանավորվող Կողմերի լիազոր  
ներկայացուցիչները ստորագրեցին սույն Պայմանագիրը և հաստատեցին այն իրենց  
կնիքներով: